

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<ԷՆ ԷՅ ՈՒՈԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված Քուչակ գյուղի մոտակայքում շշալցման գործարանի կառուցման շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկման /2-րդ քննարկում/

2020 թվականի հունիսի 30-ին ժամը 12:00-ին ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի միջնակարգ դպրոցի բակում /հասցեն՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, գ. Քուչակ / տեղի ունեցավ <<ԷՆ ԷՅ ՈՒՈԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված Քուչակ գյուղի մոտակայքում շշալցման գործարանի կառուցման շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային ծանուցումը և քննարկումը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /մասնավորապես՝ 26-րդ հոդվածի/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն : Հանրային քննարկումը իրականացվել է Պարետի 2020 թվականի մայիսի 14-ի N 74 որոշման համապատասխան, պահպանվել են արտակարգ դրության բոլոր պահանջները:

Հանրային քննարկման վերաբերյալ հանրային ծանուցումն իրականացվել էր Էլեկտրոնային հայտարարություններով: Հայտարարությունը տեղադրվել է Ապարանի համայնքապետարանի պաշտոնական կայքում / aparan.am/ և ֆեյսբուքյան պաշտոնական էջում:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ղեկավարի տեղակալը, համայնքապետարանի ներկայացուցիչներ, համայնքի ավագանու անդամը, Քուչակ վարչական տարածքի ղեկավարը, համայնքի բնակիչներ, նախաձեռնող ընկերության ներկայացուցիչներ: Հանրային լսումների /քննարկումների/ ամբողջ ընթացքը տեսաձայնագրվել է առանց ընդհատումների: Մասնակիցների ցանկը ստորագրություններով և հանրային լսումների/քննարկումների/ ընթացքի տեսաձայնագրությունը՝ համապատասխան սկավառակով կցվում են սույն արձանագրությանը:

Հանրային լսումները /քննարկումները/ վարել է պատասխանատուն, ով նաև ապահովել է արձանագրումը: Մինչև հանրային լսումների /քննարկումների/ սկիզբը հանրության կողմից գրավոր դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել, ինչի մասին հայտարարվել է նաև քննարկումների ընթացքում: Գրավոր դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել նաև մինչև սույն արձանագրության գրման պահից:

Բացելով հանրային քննարկումը՝ քննարկման պատասխանատուն՝ Ապարան համայնքի ղեկավարի տեղակալ Հ. Մկրտչյանը նախ ողջունեց բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնեց քննարկմանը մասնակցելու համար, ապա ներկայացրեց հանրային քննարկման նպատակն ու օրակարգը, նշեց, որ համայնքապետարանը միշտ բնակչության կողքին է և նրանց շահերի պաշտպանը:

Ողջույնի խոսքից հետո խոսքը տրվեց <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ Թամարա Նուրիջանյանին: Նա նախ նշեց, որ <<ԷՆ ԷՅ ՈՒՈԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված Քուչակ գյուղի մոտակայքում շշալցման գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը ներկայացվել է օրենքով սահմանված կարգով, ուսումնասիրվել է, ապա վերամշակվել է հայտը, որից հետո ծանուցվել է համայնքապետարանին, որ կազմակերպվի հանրային քննարկումը: Ապա Թ. Նուրիջանյանը նշեց, որ այն տարածքում, որտեղ նախատեսվում է կառուցել գործարանը,

փոխվել է հողի նշանակությունը, կա արդեն ջրի օգտագործման թույլտվությունը: Գործարանի տարածքը զբաղեցնում է մոտ 2 հա տարածք, Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չկան, չկան եզակի բուսատեսակներ, եթե կլինեն որոշակի բուսատեսակներ, որոնք կուզենան պահպանել, կարող են տեղափոխել: Տարածքում չկան պատմամշակութային հուշարձաններ, որոնց կարող են վնասել: Այդ տարածքում շինարարության ընթացքում կարող են առաջանալ հողային ավազանի հետ կապված խնդիրներ, բայց հայտի մեջ արդեն ներառված են այդ խնդիրները չեզոքացնող միջոցառումներ: Տարածքում առաջանալու է մոտ 4000 մ հողաշերտ, որը հետագայում նույնպես կբարեկարգվի: Հայտով տրված է նաև առաջացող թափոնները չեզոքացնելու միջոցառումներ: Եթե առաջանան որոշակի խնդիրներ, չբավարարող միջոցառումներ, ապա առաջարկվում է ձեռնարկողի կողմից ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ հատկապես օդային ավազանի մոնիթորինգի և թափոնների հետ կապված:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ Թամարա Նուրիջանյանին մասնակիցների կողմից հարցեր չուղղվեցին:

Հաջորդը ելույթ ունեցավ <<Ակունք>> ՍՊԸ-ի տնօրեն Հովհաննես Նիկողոսյանը: Նա նշեց, որ «ԷՆ ԷՅ ՌԻԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2017-ին: Ընկերությունը նախատեսում է կառուցել 22ալցված բնական խմելու ջրի արտադրության մի արդիական գործարան, որն իր արտադրական պայմաններով և սարքավորումներով անխոս կբավարարի որակի կառավարման միջազգային ամենախիստ և արդիական պահանջներին: Գործարանի սարքավորումները մատակարարվելու են աշխարհում ճանաչված արտադրողների լավագույն հնգյակին պատկանող իտալական SIPA ընկերությունից: Այս ընկերությունն ունի ավելի քան 30 տարվա փորձ ՊԷՏ շշերի արտադրության և 22ալցման ամբողջ ցիկլն ապահովող հուսալի և որակյալ սարքավորումների արտադրության: Մեր տեղի մասնագետներն անցնելով համապատասխան ուսուցում կկարողանան աշխատացնել այդ սարքավորումները ու սպասարկել դրանք: Աշխատակիցների գերակշիռ մասը կլինի տեղի համայնքներից՝ Քուչակ, Ապարան, ապահովվելով նրանց համար կայուն եկամտի աղբյուր ողջ տարին: Կստեղծվի 33-35 նոր աշխատատեղ: Նիկողոսյանը կարևորեց յուրաքանչյուր համայնքի զարգացման համար նոր աշխատատեղերի ստեղծումը, ապա ներկայացրեց, թե ինչպես է կազմակերպվելու արտադրությունը, ինչ ջուր են օգտագործելու, քանի գտում է կազմակերպվելու: Հատուկ նշվեց, որ ջրամաքրման կայան կլինի, որի մաքրումից հետո ջուրը պիտանի կլինի ոռոգման նպատակով օգտագործելու համար: Չեն լինելու օդի, ջրի և հողի աղտոտման հետ կապված խնդիրներ, հետագայում լինելու դեպքում գործարանը միջոցներ կձեռնարկի:

Հանրային քննարկման ընթացքում տրվեցին հետևյալ հարցերը՝

1. Գործարանը նախատեսվում է այնպիսի միջոցառումներ, որոնք կխթանեն կենսաբազմազանության զարգացմանը:
Գործարանի ներկայացուցիչը նշեց, որ կենսաբազմազանությանը չեն վնասի արտադրության ընթացքում, նաև կփորձեն պահպանել և զարգացնել:
2. Թեկուզ հետագայում համայնքին օժանդակելու համար նախատեսվել է որոշակի ծրագրեր: Ձեռնարկող կողմը պատասխանեց, որ անպայման համայնքի և գործարանի միջև կկնքվեն սոցիալական ծրագիր, ըստ անհրաժեշտության գործարանի հնարավորության չափով անպայման կօժանդակի:
3. Գործարանը պատրաստվում է անցնել արևային էներգիայի օգտագործմանը:
Այս հարցին ի պատասխան նշվեց, որ առայժմ չի նախատեսվում, հետագայում, եթե դրա օգտակարությունը ավելի մեծ լինի, միգուցե:
4. Կա՞ հնարավորություն պլաստիկ շշերից անցնել ապակե շշերի:

Պատասխանողը նշեց, որ արդեն կան պայմանավորվածություններ արդեն արտաքին սպառման համար, պատվերները եղել են պլաստիկ շշերով, քանի որ ապակե շշերի դեպքում և՛ լրացուցիչ ծախս է, և՛ լրացուցիչ դժվարություն: Ներքին սպառման շուկայի համար ապակե շշերով փորձում են նախատեսել, նաև հավելեց, որ ապակե շշերը լվանալու համար լրացուցիչ քիմիական նյութեր են անհրաժեշտ, որը ջրի աղտոտման վրա կազդի:

5. Նախատեսվում է նոր ճանապարհի կառուցում:

Հայտի շրջանակում ներառված է, որ ճանապարհի բարեկարգում կլինի, հետագայում նաև ճանապարհի կառուցում և կանաչապատում:

Հանդիպման ավարտին ևս մեկ անգամ ճշտվեց, թե արդյոք կան հարցեր և առաջարկներ, ինչին ի պատասխանեց մասնակիցները հաստատեցին, որ չկան հարցեր, ողջունում են այս նախաձեռնությունը:

Հանրային քննարկման պատասխանատու, Ապարան համայնքի ղեկավարի
տեղակալ՝  Հրայր Մկրտչյան

Ձեռնարկող՝  Արամ Մեխիբջանյան

